որով և երկարեցան վէճք և դատաստանք։ Հուսկ ուրեմն զիջան Լատինք 'ի հաշտութիւն եւ խաղաղեցան. զի չէր հնար ծածկել ընդ քողով որ և իցէ ամբաստանութեան և բռնութեան զդարաւոր իրաւունս Հայոց։ Ուստի ինքեանք եւս յայտնապէս խոստովան եղեն թէ հաստատեալ է այն 'ի սկզբանէ և այսր։ Այլ այս խաղաղութիւն նոցա ոչ տեւեաց ընդ երկար, զի գտին զայլ ինն պատճառս խռովութեան վերստին հակառակիլ Հայոց։

Զի 'ի սմին ժամանակի Հայք 'ի տաճարին Ս. Յարութեան յաւուրս հանդիսաւոր տօնից պատարագէին 'ի սեղանն Իւղարերից հանդէպ Գերեզմանին, եւ դնէին զոյգ աշտանակս առաջի մեծի պատկերին, որ 'ի վերայ զոյգ մարմարիոն սեանց՝ կից սեղանոյն այնմիկ յարեւելս, եւ արկանէին փսխաթս և սփռոցս 'ի հրապարակի Գերեզմանին 'ի ներքոյ մեծի գմբեթին սակս ժողովրդոց, և դնէին անդ զԱթոռ Պատրիարքին, և զկնի հանդիսին բառնային զնոսա անտի։ Իսկ Լատինք զհետ մտեալ ջանային խափանել զայն, այլ Հայք ոչ ետուն նոցա թոյլ վարիլ յամենայնի ըստ կամաց իւրեանց։ Եւ 'ի սաստկանալ վիճմանց՝ ազգ ազգաբարին դատաւորի քաղաքին, եւ նա բազմութեամբ այլազգեաց եկն 'ի Ս. Յարութիւն, ուր ժողովեալ էին միաբանք Հայոց, Յունաց և Լատինաց, եւ ընթերցան անդ առաջի բազմութեան զգրեանս, զորս մատուցին Հայք։ Յետ այնորիկ եհարց դատաւորն ցլուսարարն և ցթարգմանն Յունաց, թէ Հայք՝ ըստ զօրութեան մուրհակացն, ունի՞ն զայսոսիկ իրաւունս, և ո՞րպէս գիտէք և տեսեալ իցէք, եւ նոքա ետուն պատասխանի. ունին զայսոսիկ ըստ վաղեմի սովորութեան իւրեանց, եւ անխափան կատարեն։ Կոչեաց և զայլազգի դռնապանն, և նոքա ըստ նոյն պատասխանիս երկրորդեցին. զայն տեսեալ Լատինաց ակամայ կամօք յանձն առին խոստովանիլ զիրաւունս Հայոց։ Ապա պատուիրեաց դատաւորն Ֆրանչիսկեան կրբոնաւորաց, չդրգռել զայնպիսի վէճս և խռովութիւնս, զորս ոչ կարեն հաստատել օրինաւոր գրովք։ Զի թէպէտ վերստին գրով հաստատեաց զսովորութիւնս Հայոց, ١١٤٢ (1730), այլ չեղեւ հնար զերծանիլ 'ի ձեռաց նոցա, որպէս ունիմք ասել յիւրում տեղւոջ։